XII. *Ջանդեղուբի դատաւորում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր.*

1) *Գորիսի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Գորիս քաղաքում և*

2) *Ղաթարի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ղաթար գիւղում:*

XIII. *Ալեքսանդրապոլ դատաւորում հաստատւում են երկու քննիչական մասեր.*

1) *Ալեքսանդրապոլի հաշտարար բաժանմունք և քննիչական մաս Ալեքսանդրապոլ քաղաքում և*

2) *Ալեքսանդրապոլի դատաւորական հաշտարար բաժանմունք և քննիչական մաս, կենտրոն ընդունելով Ալեքսանդրապոլ քաղաքը:*

Արդարադատութեան մինիստրին է վերապահւում հաշտարար բաժանմունքների և քննիչական մասերի սահմանների որոշումն և փոփոխումն համաձայն դատաստանական հիմնարկութիւնների կանոնադրութեան 447 յօդւածի:

(Հաստ. դեկտ. 6-ին 1918թ.)

Երդւեալ ատենակալների դատարանի ներմուծման մասին, Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրայ. — *Յօդ. 1. Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի սահմաններում մտցնւում է դատարան երդւեալ ատենակալներով, քրէական դատավարութեան կանոնադրութեան հիման վրայ:*

Յօդ. 2. Քրէական դատաստանական կանոնադրութեան յօդ. 84, 87, 88, 97, 113, 437 և 450 *վերացւում են:*

Յօդ. 3. Դատաստանական կանոնադրութեան 81 *յօդւածը ձևակերպել այսպէս. երդւեալ ատենակալները ընտրւում են Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներից՝ կէտ* 1 *վերացւում է, 2 և 4 կէտերը ձևակերպել այսպէս՝ 2 կէտը «դրագէտներ», 4 կէտը՝ «առնւազն 6 ամիս այն դատարանի ապրողներն, որտեղ կատարւում են երդւեալ ատենակալների ընտրութիւնները»:*

Յօդ. 4. Դատաստանական կանոնադրութեան 89 *յօդւածը ձևակերպել այսպէս. «հերթական ցուցակները կազմող յանձնաժողովը կազմւում է՝ իւրաքանչիւր դատարանի և քաղաքի համար առանձին. ըստ որում. — կէտ* 1) *քաղաքներում քաղաքային ինքնավարութիւնները, կէտ* 2) *դատարաններում տեղական դատարանի նիստատեղական ինքնավարութիւնները, իսկ մինչ նիստատեղի հաստատումը — դատարանի կոմիսարիատը:*

Յօդ. 5. Դատաստանական կանոնադրութեան 97*ը յօդւածը ձևակերպել այսպէս. «հերթական ցուցակները կազմող յանձնաժողովը կազմւում է՝ քաղաքներում քաղաքագլխի կամ տարածատեղի նախագահութեամբ իսկ դատարաններում նիստատեղական ինքնավարութեան նախագահի (այն տեղերում, որտեղ նիստատեղ չկայ առայժմ — նախագահում է դատարանի կոմիսարը) ինքնավարութեան անդամի հաշտարար դատատուրների, դատախազի ընկերոջ, հարկային տեսչի, քննիչի, միլիցիայի պետի և ընդհանրապէս այն բոլոր անձնաւորութիւններից, որոնց յարմար կը դանի հրաւիրելու յանձնաժողովի նախագահը:*

Նշում. յանձնաժողովի անդամների պարտաւորեցուցիչ թիւն է յիշեալ կազմից 5 *մարդ:*